



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հուլիսի 2019 թվականի N 75 -Ա

## ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՆՓՈՓՈՒՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 07-ի N 992-Ն որոշման հավելվածի 69-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթի արդյունքներով հաղթող չճանաչված մասնակից՝ Սլավիկ Սուրենի Ամիրյանի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 73-Ա որոշմամբ հաստատված հանձնաժողովի եզրակացությունը՝

որոշում եմ.

1. Անփոփոխ թողնել Սլավիկ Սուրենի Ամիրյանի վերաբերյալ՝ «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի՝ տնօրենի թափուր պաշտոնի համար անցկացված մրցույթի արդյունքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

30.07.2019

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: ПОГ. ОСЯНКАСЯН 406564017

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2019թ. հուլիսի 30  
ք. Կապան

